Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

29.01.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.01.2016թ.-ի թիվ 5 կարգադրությունը, <<Թառաթումբի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2014-2015թթ.-ի գործունեության ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ն. Կարապետյանի՝ աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետներ՝ Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին դպրոցի տնօրեն՝ Զ. Խաչատրյանը և հաշվապահ՝ Ժ.Գասպարյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: ՈՒնեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ:

<<Թառաթումբի միջնակարգ դպրոց>> Պետական ոչ առևտրային կազմակերպություն գ. Թառաթումբ:

2014 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 7:

-աշակերտների թիվը- 58:

-աշակերտների միջին խտությունը- 8.3:

Տարրական դպրոց 1.5 դասարան, աշակերտների թիվը 15, միջին խտությունը 10:

Միջին դպրոց 2.5 դասարան, աշակերտների թիվը 21, միջին խտությունը 8.4:

Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 22, միջին խտությունը 7.3:

Աշխատողների թվաքանակը 26, մանկավարժական աշխատողների թվաքանակը 14, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 9.7, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 12, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 10.5:

Ընդամենը դրույքների թիվը 20.2:

ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 15.2 ժամ կամ 0.69 դրույք :

2015 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 7.5:

-աշակերտների թիվը- 54:

-աշակերտների միջին խտությունը- 7.2:

Տարրական դպրոց 2 դասարան, աշակերտների թիվը 15, միջին խտությունը 7.5:

Միջին դպրոց 2.5 դասարան, աշակերտների թիվը 17, միջին խտությունը 6.8:

Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 22, միջին խտությունը 7.3:

Աշխատողների թվաքանակը 26, մանկավարժական աշխատողների թվաքանակը 14, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 10.2, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 12, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 10.5:

Ընդամենը դրույքների թիվը 20.7:

ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 16 ժամ կամ 0.72 դրույք:

2. Ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում

2014թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	
1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	13	15	X	27	21	X	18	22	X	
2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	13	15	X	27	21	X	18	22	X	
3.Աշակերտների թիվը ըստ մատյանների	13	15	X	27	21	X	18	22	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	121097	121097		121097	121097		121097	121097		
5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/	906.0	453.0	1359.0	2248.9	1124.4	3373.3	1770.6	885.3	2655.9	7388.2
6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/	X	X		X	X		X	X		16876
7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		3597.2
8.Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		27861.4
Ըստ աուդիտի 3*4	906.0	453.0	1359.0	2248.9	1124.4	3373.3	1770.6	885.3	2655.9	7388.2
6.Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		16876
Այլ լրացուցիչ ավելացում	X	X		X	X		X	X		3597.2
8.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		27861.4
Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/	X	X		X	X		X	X		0.0

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 14, 25 և 19 աշակերտ:

2015թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	
1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	15	15	X	21	17	X	22	22	X	
2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	15	15	X	21	17	X	22	22	X	
3.Աշակերտների թիվը ըստ մատյանների	15	15	X	21	17	X	22	22	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	124000	124000		124000	124000		124000	124000		
5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/	997.2	498.6	1495.8	1848.3	924.1	2772.4	2106.2	1053.1	3159.3	7427.5
6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/	X	X		X	X		X	X		19000
7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		1430.1
8.Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		27857.6
Ըստ աուդիտի 3*4	997.2	498.6	1495.8	1848.3	924.1	2772.4	2106.2	1053.1	3159.3	7427.5
6.Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		19000
Այլ լրացուզիչ ավելացում	X	X		X	X		X	X		1430.1
8.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		27857.6
Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/	X	X		X	X		X	X		0.0

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 15, 20, 22 աշակերտ:

Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ◻ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ◻ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2014թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	29052.2	29065.9	28447.8	28447.8	28342.4	25746.5	-3305.7
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	28068.4	27861.4	28447.8	28447.8	28342.4	25746.5	-2321.9
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	27188		27511.2	27511.2	27511.2	25112	-2076
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	880.4		936.6	936.6	831.2	634.5	-245.9
Գրասենյակային նյութեր և հագուստ	150		71.5	71.5	71.5	71.5	-78.5
Կենցաղ և հանրային սննդի նյութեր			141	141	141	141	141
Հատուկ նպատ.նյութեր			25	25	25	25	25
Այլ ծախսեր							0
Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր	20		15.2	15.2	15.2	15.2	-4.8
Ներքին գործուղումներ							0
Կապի ծառայության վճարներ	70		56.8	56.8	56.8	51.2	-18.8
Կոմունալ ծառայությունների վճար	600.4		587.1	583.6	481.7	287.1	-313.3
էլ. էներգիայի ծախսեր	600.4		587.1	583.6	481.7	287.1	-313.3
Վառելիքի և ջեռուցում ծախսեր							0
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.							0
Տրանսպորտ							0
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	40		40	43.5	40	43.5	3.5
Բանկի տոկոս		13.7					0
Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց.	794.3	794.3					0
Այլ ծրագրեր*	164.5	164.5					0
Այլ ծրագրեր**	25	25					
Այլ ծրագրեր***		207					

* ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 692-Ն որոշմամբ դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով հատկացված գումար: Նախատեսվել է 164.5 հազ.դրամ /15 աշակերտ/,

ֆինանսավորվել է 164.5 հազ.դրամ: Փաստացի ծախսը կազմել է 164.5 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 164.5 հազ.դրամ:

** Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում ծրագրով ֆինանսավորում:

*** ՀՀ կառավարության որոշմամբ նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացման փոխհատուցման գումար:

ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2015թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	28850.9	28873.4	28147.2	28147.2	28173.9	28233.6	-617.3
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	28210.3	27857.6	28147.2	28147.2	28173.9	28233.6	23.3
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	27505.8		27214.9	27214.9	27214.9	27194.3	-311.5
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	704.5		932.3	932.3	959	1039.3	334.8
Գրասենյակային նյութեր և հագուստ	231.9		115.3	115.3	115.3	115.3	-116.6
Կենցաղ և հանրային սննդի նյութեր	306.8		300.7	300.7	300.7	300.7	-6.1
Հատուկ նպատ.նյութեր	30		22.5	22.5	22.5	22.5	-7.5
Այլ ծախսեր	40.2		3.2	3.2	3.2	3.2	-37
Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր	20		13.7	13.7	13.7	13.7	-6.3
Ներքին գործուղումներ							0
Կապի ծառայության վճարներ	70		52.8	52.8	52.8	52.6	-17.4
Կոմունալ ծառայությունների վճար	5.6		424.1	424.1	450.8	531.3	525.7
Էլ. էներգիայի ծախսեր	0.3		424.1	424.1	450.8	531.3	531
Վառելիքի և ջեռուցում ծախսեր							0
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.							0
Տրանսպորտ	5.3						-5.3
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.							0
Բանկի տոկոս		22.5					0
Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց.	618.1	618.1					0
Այլ ծրագրեր*		352.7					0
Այլ ծրագրեր**	22.5	22.5					

* ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 692-Ն որոշմամբ դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով հատկացված գումար: Նախատեսվել է 352.7 հազ.դրամ /15 աշակերտ/,

ֆինանսավորվել է 352.7 հազ.դրամ: Փաստացի ծախսը կազմել է 341.0 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 341.0 հազ.դրամ, մնացորդը՝ 11.7 հազ.դրամ:
** Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում ծրագրով ֆինանսավորում:

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ հազ.դրամ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Սոց ապահ. վճարներ		Կապի ծառայութ.		էլ էներգ. ծախսեր.		Գազ		Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
ՄՆ.01.01.14թ		2399.2				5.6		216.0					0.0	2620.8
Շրջանառություն 2014թ	27511.2	25112.0			56.8	51.2	583.6	287.1			296.2	296.2	28447.8	25746.5
ՄՆ.01.01.15թ							80.5						80.5	0.0
Շրջանառություն 2015թ	27214.9	27194.3			52.8	52.6	424.1	531.3			455.4	455.4	28147.2	28233.6
ՄՆ.01.01.16թ	20.6				0.2			26.7					20.8	2510.2

Հաշվապահական հաշվեկշիռ Ձև N 1
առ. 01.01.2015թ. - առ 01.01.2016թ..

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Շեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	369.7	369.7	0
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	369.7	369.7	0
արժեքը	369.7	369.7	0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	969.1	989.9	20.8
Նյութեր	242.9	242.9	0
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.	0	0	0
արժեքը			0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ.պարտքեր	0	20.8	20.8
որից հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ.սոց.ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի նետ			0
Հաշվարկներ անձնակազմի նետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ		20.6	20.6
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
հաշվ տարբ. դեբիտ. հետ		0.2	0.2
դրամականկան միջոցներ,որից	726.2	726.2	0
դրամարկղ			0
հաշվարկային հաշիվ	726.2	726.2	0
Հաշվեկշիռ	1338.8	1359.6	20.8
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից՝	1312.1	1332.9	20.8
Լրացուցիչ կապիտալ	1312.1	1332.9	20.8
Հաշվետու տար.չօգ. զուտ շահ.			0
Նախ. կար. չօգ. զուտ շահ.			0
Եկամ. վերաբ. շնորհ.			0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	26.7	26.7	0
այդ թվում			0
հաշվարկ. մատակ.և կապալ. հետ			0
հաշվարկներ բյուջեի հետ			0
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով			0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ	26.7	26.7	0
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	0	0	0
գալիք ժման. եկամուտներ			0
Հաշվեկշիռ	1338.8	1359.6	20.8

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

Դրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն
առ. 01.01.2015թ. - առ 01.01.2016

Ձև N 4
հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	618.1	618.1	0.0
գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	27857.6	27857.6	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	397.7	397.7	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	28255.3	28255.3	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
Ձեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100			0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110	909.8	932.3	22.5
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	27214.9	27214.9	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Առհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բյուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170			0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	28124.7	28147.2	22.5
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	190	130.6	108.1	-22.5
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		748.7	726.2	-22.5

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ն.Կարապետյանս՝ աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետներ՝ Հ.Ավետիսյանս և Խ.Խաչատրյանս իրականացրեցինք <<Թառաթումբի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014-2015 թթ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2016 թ.-ի դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջման ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կողմից կազմակերպության հաշվապահական հաշվառման գործունեությունը գնահատվել է բավարար: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

2014-2015թթ. ուսումնական տարում ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 15.2 ժամ կամ 0.69 դրույք: 2015-2016թթ.-ին՝ 16 ժամ կամ 0.72 դրույք: ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 2015-2016թթ.-ին 2014-2015թթ.-ի նկատմամբ աճման տենդենց է կրում:

Առ 01.01.2016 թ.-ի դրությամբ կազմակերպության դրամական մնացորդը կազմել է 726.2 հազ.դրամ, դեբիտորական պարտքը՝ 20.8 հազ.դրամ /20.6 հազ. դրամ՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ, 0.2 հազ.դրամ՝ կապի ծառայություն/, կրեդիտորական պարտքը՝ 26.7 հազ.դրամ /էներգետիկ ծառայություններ/: 26.7 հազ.դրամի կրեդիտորական պարտքը դրամական մնացորդով ամբողջությամբ ապահովված է: Առ 01.01.2016թ.-ի դրությամբ դրամական միջոցների ազատ մնացորդը կազմում է 720.3 հազ.դրամ:

Արձանագրված թերություններ և խախտումներ

2014-2015թթ.-ին ակտիվների և պարտավորությունների ամենամյա պարտադիր գույքագրման

հանձնաժողովներ չեն ստեղծվել և գույքագրումներ չեն կատարվել: Խախտվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 22.06.2000 թ.-ի <<Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին>> թիվ 102 հրամանի պահանջները: Գտնում ենք, որ առկա է գույքի ստացման, օգտագործման, փաստացի առկայության բարձր ռիսկեր:

Բացակայում է պահակների հերթափոխի մատյանը, սահմանված չէ հերթափոխության ժամանակացույցը, հերթափոխության սկիզբը և ավարտը: Գտնում ենք, որ գույքի պահպանումը, պահակների փաստացի աշխատանքային պարտականությունների կատարումը բարձր ռիսկային է:

Աշխատակիցների անձնական թվով 20 գործերում բացակայում են անձը հաստատող փաստաթղթի, սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի, կրթության մասին վկայականի լուսապատճենները:

Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները ամբողջ ծավալով չեն օգտագործվել: Արդյունքում կուտակվել է 726.2 հազ.դրամի դրամական ազատ մնացորդ:

Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի՝ նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Առաջարկվեց դպրոցի տնօրենին՝

ա/ Կազմել գույքագրման հանձնաժողովներ և կատարել ակտիվների և պարտավորությունների գույքագրում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 22.06.2000 թ.-ի <<Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին>> թիվ 102 հրամանի պահանջների համաձայն:

բ/ Ապահովել աշխատանքի հերթափոխային ժամանակացույցների առկայությունը ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքի>>142, 148 և 149 հոդվածների համաձայն:

գ/ Անձնական գործերում ապահովել ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքի>> 89-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող փաստաթղթերի լուսապատճենների առկայությունը:

դ/ Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները օգտագործել ամբողջ ծավալով, թույլ չտալ դրամական ազատ միջոցների տարեվերջյան կուտակում:

Առաջարկությունների կատարման վերաբերյալ մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Առաջարկում ենք Նեքին աուդիտի կոմիտեին՝ նշված խախտումները թույլ տալու համար տնօրենի նկատմամբ կարգապահական տույժ կիրառել:

Ներքին աուդիտի բաժնի
աշխատանքային խմբի ղեկավար՝ Ն. Կարապետյան
Ներքին աուդիտորներ՝ Հ. Ավետիսյան
Խ. Խաչատրյան

Դպրոցի տնօրենի՝ Զ.Խաչատրյան
Հաշվապահ՝ Ժ.Գասպարյան